



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 1 – Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի թիվ 1 նիստի օրակարգը՝

1. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու եվ այն հաստատելու մասին

/Ձեկ.՝ Ա. Թարվերդյան/

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի զարգացման 2017-2021 թվականների ծրագրի հաստատման մասին

/Ձեկ.՝ Ա. Թարվերդյան /

Կողմ – 6

Դեմ - 0 Ձեռնպահ - 0

1. ԱՐԱՐԱՏԱՆ ԿԱՐԱՊԵՏ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՆԻ

3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

5. ՀՈՎՍԵԹՅԱՆ ԱԻԴԱ

6. ՀՈՎՍԵԹՅԱՆ ԱՆՆԱ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈՒ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 2 -Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԵՎ ԱՅՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի
Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3 կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել համայնքի 2017թ. բյուջեն հետևյալ տեսքով.

1. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳԾՈՎ

1. Հողի հարկ	3250.0 հազ. դրամ
2. Գույքահարկ	4148.8 հազ. դրամ
3. Վարձակալական հողի և գույքի վարձավճար	800.0 հազ. դրամ
4. Տեղական տուրք	280.0 հազ. դրամ
5. Դոտացիա	34336.0 հազ. դրամ
6. Տեղական վճարներ	160.0 հազ. դրամ
7. Վարչ. բյուջեի տարեսկզբի մնացորդ	7179.466. դրամ
8. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդ	4147.511 հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

54301.777 հազ. դրամ

2. ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Կառավարման ապարատի պահպանում	21465.0 հազ. դրամ
2. Նախադպրոցական ուսուցում	500.0 հազ. դրամ
3. Հուղարկավորության և այլ նպաստներ բյուջեից՝ որից	3410.0 հազ. դրամ
ա. Սոցիալապես անապահով ընտանիքներին	2500.0 հազ. դրամ
բ. Հուղարկավորության նպաստ	810.0 հազ. դրամ
գ. Ծաղկեպսակների գումար	100.0 հազ. դրամ
4. Մշակույթային միջոցառումներ	2000.0 հազ. դրամ
5. Աղբահանություն	1130.0 հազ. դրամ
6. Հասարակական կազմ. աջակցություն	500.0 հազ. դրամ
7. Թատերական ներկայացումներ /տոմսերի արժեք/	100.0 հազ. դրամ
8. Գույքի նկատմամբ իրավունքի ձեռք բերում	1480.0 հազ. դրամ
9. Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում	850.0 հազ. դրամ
10. Կենսաբազմազանություն և բնության պահպանում	200.0 հազ. դրամ
11. Առաջին դասարանցիներին նվերներ	300.0 հազ. դրամ
12. Դասագրքերի գումար	250.0 հազ. դրամ
13. Շրջանավարտներին նվերներ	300.0 հազ. դրամ
14. Հանգիստ, մշակույթ և կրոնի այլ դասերին չպատկանող /սպորտային իրերի գնում/	500.0 հազ. դրամ
15. Փողոցների պահպանում և շահագործում	2400.0 հազ. դրամ
16. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	6244.8 հազ. դրամ
17. Գետերի հունների մաքրում	645.0 հազ. դրամ
18. Առողջապահության այլ դասերին չպատկանող	200.0 հազ. դրամ
19. Ջրամատակարարում և ջրահեռացում	500.0 հազ. դրամ
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ	<u>42974.8 հազ. դրամ</u>

Կառավարման ապարատի ծախսային մասը՝
ըստ առանձին հոդվածների:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԾԱԽՍԵՐ

1. Աշխատավարձ	16500.0 հազ. դրամ
2. Պարգևատրում	1500.0 հազ. դրամ
2. Էներգետիկ ծառայություն	800.0 հազ. դրամ
3. Կոմունալ ծախսեր	210.0 հազ. դրամ
4. Կապի ծառայություն	250.0 հազ. դրամ
5. Տեղեկատվություն	150.0 հազ. դրամ
6. Գրասենյակային ծախսեր	300.0 հազ. դրամ
7. Կենցաղային և տնտ. նյութեր	200.0 հազ. դրամ
8. Տրանսպորտային նյութեր	700.0 հազ. դրամ
9. Մեքենայի և սարք. պահպանման ծախսեր	300.0 հազ. դրամ
10. Պարտադիր վճարներ	50.0 հազ. դրամ
11. Մեքենայի ապահովագրություն	35.0 հազ. դրամ
12. Ծխատար և օդատար ուղիների տեխ. սպասակում	70.0 հազ. դրամ

13. Ներքին գործուղում	50.0 հազ.դրամ
14. Համակարգչային ծառայություններ	200.0 հազ.դրամ
15. Հատուկ նպատակային նյութեր	150.0 հազ.դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԾԱԽՍԵՐ 21465.0 հազ. դրամ

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1. Մարզահրապարակի կառուցում	1000.0 հազ. դրամ
2. Նախագծահետազոտական ծախս	50.0 հազ.դրամ
3. Գյուղապետարանի գույքի գնում	400.0 հազ. դրամ
4. Եկեղեցու արտաքին տեսքի բարեկարգում և շրջապատի մաքրում	3000.0 հազ.դրամ
5. Նախագծահետազոտական ծախսեր	150.0 հազ. դրամ
6. Գերեզմանոցի հանգստի քարերի ձեռքբերում	1800.0 հազ. դրամ
7. Նախագծահետազոտական ծախս	100.0 հազ.դրամ
8. Գլխավոր հատակագծի քարտեզագրում	1000.0 հազ. դրամ
9. Է. Մանասյան փողոցի արտաքին լուսավորում	1500.0 հազ. դրամ
10. Նախագծահետազոտական ծախս	100.0 հազ.դրամ
11. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում	2026.977 հազ. դրամ
12. Նախագծահետազոտական ծախս	200.0 հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 11326.977 հազ. դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐԸ 54301.777 հազ. դրամ:

Կողմ -6

Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԴԱՅԱՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՄԻ
3. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻՂԱ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՇՈՏ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունվարի 2017 թվականի N 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան
համայնքի զարգացման 2017-2021 թվականների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐԱՐԱՑԱՆԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱՏՈՒՄԻ
3. ԹԱՐԿԵՐՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱԻԴԱ
6. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՆՆԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՐԳՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՇՈՏ ԹԱՐԿԵՐՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԲՈՒՐԱՍՏԱՆ 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....

1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....
 2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԲԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....
 3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....
 4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում....
 5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....
 6. ՀԶԲԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը.....
- Եզրափակում.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, 210-րդ հոդվածի, և որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից:

Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր: ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի բովանդակությունը պայմանավորված է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցների աշխատանքով և առաջարկություններով, համայնքում առկա ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ Բուրաստան համայնքը ունի մի շարք առաջնային խնդիրներ: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, արտադրության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

2017-2021թթ. համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները՝ նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց՝ համայնքի ղեկավարին կից գործող համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը փաստաթուղթը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված Հայաստանի Հանրապետության

ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների, կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ-մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բուրաստան համայնքի բնակիչները հիմնականում աշխատասեր մարդիկ են : Հատկապես վերջին 3-4 տարիներին նրանք ավելի սիրով և ակտիվորեն են մասնակցում համայնքի մշակութային կյանքին : Ավելի է սերտացել բնակիչ -համայնքապետարան կապը , որը և հաճախ օգնում է համայնքի հոգևոր մշակութային , ինչպես նաև սոցիալ- տնտեսական խնդիրների լուծմանը:

Համայնքի բնակիչները վստահում և հավատում են տեղական ինքնակառավարման մարմնին՝ համայնքի ղեկավարին, ավագանուն և համայնքապետարանի աշխատակազմին : Իսկ դա էլ իր հերթին օգնում է վերջիններիս իրականացնելու ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով իրենց վերապահված լիազորությունները :

1.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բուրաստան համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում, Ազատ գետի ափին, Արարատ լեռից 20կմ հեռավորության վրա, Արտաշատ քաղաքից 6-7կմ հյուսիս-արևմուտք: Այն գտնվում է Երևան-Արտաշատ խճուղու վրա, մայրաքաղաքից 20կմ հեռավորությամբ : Սահմանամերձ գյուղ է՝ /սահմանակից է Թուրքիային 3կմ ցամաքային հեռավորությամբ/ :

Ü³ Ėĭ ÇYáDù áóŸ»ó»Éç ¶³ ñ³ Ñ^ß Û^{1/2}, Â³ Û^ß ÛÉã ĭ³ ñ³ Ñ^ß Û^{1/2} Éç³ Ýí³ YáDùJutpÁ:

Վարչական տարածքը 973.71 հա է:

Ծովի մակարդակից ունի 840կմ բարձրություն:

Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռը սկսվում է դեկտեմբերի կեսերից:

Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր: Օդի միջին ամսեկան ջերմությունը հասնում է 24 C°, առավելագույնը՝ 42C°:

Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:

Համայնքն ունի 587 տնտեսություն:

2016թ հունվարի 1-ի դրությամբ բնակչությունը կազմում է 2440 մարդ:

Համայնքն ունի գործող մշակույթի տուն, գրադարան, որոնք վերանորոգված են, գտնվում են լավ վիճակում:

Ունի նաև բարեսէս, վերանորոգված բուժամբուլատորիա և մանկապարտեզի շենք:

Համայնքի հողերը ոռոգվում են մի մասը՝ պոմպակայանի, մյուսը՝ «Մխչյան» ջրամբարի ջրերով: Ոռոգման համակարգը հիմնովին վերանորոգման կարիք ունի: Գյուղը Ազատավան գյուղից բաժանում է Ազատ գետը: Գյուղի վարչական տարածքում կա 3 կամուրջ:

Համայնքում խոշոր արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպություններ չկան, բացառությամբ՝ կոնյակի գործարանի, որը 15 տարուց ավելի չի գործում:

Համայնքը գազաֆիկացված է 95%-ով, գազատարը կազմում է 10.4 կմ, կա 2 գազաբաշխիչ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ և հողագործությամբ: Համայնքի հողերի մեծ մասը 5-րդ կարգի ցածրորակ հողեր են այդ իսկ պատճառով դրանց մեծ մասը բնակիչներն օգտագործում են անասնակեր / առվույտ, խոտ / ստանալու համար:

Համայնքի փողոցները հիմնականում բարեկարգ են:

Համայնքի հիմնախնդիրներից կարևորագույնը ջրատարներում կիսախողովակների տեղադրումն է:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչությունը կազմում է 2074 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 1004 և կանայք՝ 1070: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակ 1-ում:

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը
1	2	3
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	2074
	Տղամարդիկ	1004
	Կանայք	1070
	0-6 տարեկան, այդ թվում՝	180
	- 0-3 տարեկան	94
	- 3-6 տարեկան	86
	7-17 տարեկան	222
	18-63 տարեկան	1446
	63-ից բարձր տարեկան	226
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	267
	Տարիքային և աշխատանքային	242
3.	Փախստականներ	6
4.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	2
5.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	2
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	2
	Մանկուց հաշմանդամներ	7
9.	Աշխատունակներ	1414
10.	Զբաղվածներ	726

11.	Գործազուրկներ, այդ թվում՝	65
	Գրանցված	26
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	517
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝	69
	Նպաստառու ընտանիքների թիվը	56
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	2
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	30
	Անօթևան ընտանիքներ	0
16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	120
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	88
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	125

1.4 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Ժողովրդի իշխանությունը իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով օրենքով սահմանված կարգով ընտրվում են տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և համայնքի ավագանի 5 տարի ժամկետով: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի, Հանրապետության սահմանադրությամբ և Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն պաշտոնապես ներկայացնում է համայնքը, համայնքի գործադիր մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ և Տեղական ինքնակառավարման մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով: 2016թվականի սեպտեմբերի 18 – ի ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ղեկավար և ավագանին՝ բաղկացած 7 անդամից, որից 2-ը կին : Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է ստորև՝

- | | |
|---|---------------------|
| - Համայնքի ղեկավար | 1 հաստիքային միավոր |
| - Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 հաստիքային միավոր |
| - Աշխատակազմի քարտուղար - | 1 հաստիքային միավոր |
| - Գլխավոր մասնագետ - | 1 հաստիքային միավոր |
| - Առաջատար մասնագետ - | 1 հաստիքային միավոր |
| - Առաջին կարգի մասնագետ - | 1 հաստիքային միավոր |
| - Գործավար - | 1 հաստիքային միավոր |
| - Սպորտկազմակերպիչ - | 1 հաստիքային միավոր |
| /Կրթության, մշակույթի և սպորտի հարցերով պատասխանատու/ | |
| - Գրադարանավար - | 1 հաստիքային միավոր |
| - Օպերատոր - | 1 հաստիքային միավոր |
| - Պահակ - | 1 հաստիքային միավոր |
| - Հավաքարար - | 1 հաստիքային միավոր |
| - այգեպան - | 1 հաստիքային միավոր |

Ընդամենը՝

14 միավոր

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքն ունի սեփականություն, որի իրավունքը պաշտպանված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով: Համայնքի սեփականություն կարող են լինել անշարժ և շարժական գույքը, դրամական միջոցները և այլն: Համայնքապետարանը տեղակայված է համայնքի մշակույթի տան շենքում, որը գտնվում է գյուղի կենտրոնական մասում: Այտեղ է գտնվում նաև Բուրաստանի <<Առողջության առաջնակի պահպանման կենտրոն >> - ի շենքը, ինչպես նաև մանկապարտեզի շենքը / վերջինս համայնքի սեփականությունն է՝ իր գույքի հետ միասին: Համայնքի սեփականությունն է նաև բուժամբուլատորիայի գույքը:

Մշակույթի տան շենքից համայնքապետարանի զբաղեցրած մասը վերանորոգվել է 2009-2010թթ., վերանորոգվել է նաև շենքի տանիքը:

Ընդհանուր առմամբ համայնքապետարանի վարչական շենքը բարեկարգված է թե ներսից և թե դրսից: Համայնքապետարանն ապահովված է ջեռուցման համակարգով: Սակայն վերանորոգման և գույքի ձեռքբերման խիստ կարիք ունի համայնքապետարանի մշակույթի տան դահլիճը, մարզասրահը, ինչպես նաև շենքի առաջին հարկի միջանցքը:

Բարեկարգ վիճակում է նաև մանկապարտեզի շենքը, որն առ այսօր գործել է որպես նախակրթարան, այլ ոչ թե մանկապարտեզ, որի կարիքը համայնքն իրոք շատ ունի:

Ստորև ներկայացված է 12.12.2016թվականի դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը.

1. Ակումբ-գյուղապետարան	- 51995.2 հազ. դրամ,
2. Բուժամբուլատորիայի շենքը	- 17233.535 հազ. դրամ,
3. Մանկապարտեզի շենք	- 18824.15 հազ. դրամ
4. Զբաղմունքային	- 6264.4 հազ. դրամ,
5. Աղբյուր-հուշարձան	- 32.0 հազ. դրամ,
6. Կոյուղի և հասարակական գույքարան	- 982.4 հազ. դրամ,
7. Էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներ (2 հատ)	- 123.6 հազ. դրամ
8. Կենտրոնական փողոցի լուսավորության ցանց	- 5400.0 հազ. դրամ,
9 Ավտոմեքենա Գազ-31 10	- 2000.0 հազ. դրամ,
10. Թվային տեսագրող սարք, տեսախցիկներով	- 277.0 հազ. դրամ
11. Հասարակական տրանսպորտային կանգառ	- 799.0 հազ. դրամ
12. Հասարակական տրանսպորտային կանգառ	- 849.0 հազ. դրամ
13. Ժամանակավոր կացարան	- 750.0 հազ. դրամ
14. Տեսահսկողական համակարգ/2016թ/	- 150.0 հազ. դրամ
15. Մետաղական նստարան/2016թ/ 7 հատ	350.0 հազ. դրամ
16. Ճոճանակ /2016թ/ 1 հատ	- 150.0 հազ. դրամ
17. Ճոճանակ 2016թ/ 2 հատ- Ընդամենը	- 400.0 հազ. դրամ 106580.285 հազ. դրամ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1. Երկաթյա պահարան՝ երեք հատ

- 470 դրամ,

2. Մետաղական պահարան 2013թ` երկու հատ	-180000դրամ
3. Աթոռ (դիրեկտորական) `մեկ հատ	-30000դրամ,
4. Մեղան վարչական `մեկ հատ	-110000դրամ,
5. Գրասեղան` չորս հատ	-120000դրամ
6 Կահույք (խոլ)	-275000դրամ
7. Հեռուստացույցի տակդիր` մեկ հատ	-55000դրամ,
8. Հեռուստացույց / Panasonic/	-140000դրամ,
9.Խորհրդակցության սեղան` մեկ հատ	-60000դրամ,
10.Պահարան ապակե դռներով /պրոֆիլով/չորս հատ	-280000դրամ
11. Շարժական տումբա երեք դարակով` մեկ հատ	-25000դրամ,
12. Գործավարի սեղան չորս դարակով` մեկ հատ	-35000դրամ,
13. Պահարան ամբողջ դռներով` մեկ հատ	-65000դրամ,
14.Տնօրենիսեղանիհացաքածու` մեկկոմպլեկտ	
-150000դրամ	
/սեղան, տումբա, կողադիր և դիմադիր սեղան/	
15. Աթոռ նոր /2011թ./ 8 հատ	-144000դրամ
16. Աթոռ նոր /2011թ./ 4հատ	-40000դրամ
17. Աթոռ նոր //2012թ./ 1հատ	-10000դրամ,
18. Շերտավարագույր 31քմ , 2013թ.	-205000դրամ,
19. Հագուստի կախիչներ երկու հատ, 2013թ.	-20000դրամ,
20. Գրասեղան երկտումբանի երկու հատ, 2013թ.	-130000դրամ
21. Էլեկտրական հովհար (вентилятор) հինգ հատ	-38000դրամ
22. Մետաղյա աթոռ /2014թ 12 հատ/	-108000դրամ
23. Ջրի սարք /2014թ/մեկ հատ	_55000դրամ
24 Երաժշտական կենտրոն /2014թ/ մեկ հատ	-140000դրամ
25 .Հեռուստացույց/2014թ/ մեկ հատ	-155000դրամ
26.Վեբ տեսախցիկ/2014թ/մեկ հատ	-8000դրամ
27. Այգու պահպանման սարքավորում/2014թ/	-110900դրամ
/խոտհնձիչ,խողովակ,երկարացման լար, ցնցուղ, խրոց/	
28. Այգու նստարան/ 2014թ/3 հատ	-45000դրամ
29. Այգու կիսակլոր նստարան/2014թ/4 հատ	-100000դրամ
30.Ծաղկաման /2014թ/ 3հատ	-105000դրամ
31. Աղբաման/2014թ/ 3 հատ	-30000դրամ
32. Ցուցանակ/2014թ/1 հատ	-45000դրամ
33. Ցուցանակ /2014թ/ 2 հատ	-60000դրամ
34 .Համակարգիչ/2014թ/	-185000.դրամ
35.Համակարգիչ/2015թ/	245000. դրամ
36. Օդարակի /3 հատ/	615000, դրամ
37. Մեղան/2015թ/ վարչական	65000. դրամ
38.Պրինտեր/2015թ/Canon	74000 .դրամ
39.,Վարչական սարք./վացարան, հայելի զուգարանակոնք/	93000 .դրամ
40 Վարչական Սարքավորումներ /Ստենդներ/	221300 դրամ
41.Համակարգիչ /ALTON 9800X/	-350000դրամ
42.Համակարգիչ /D-Tech/	-400000.դրամ
43..Պրինտեր /Samsung/	- 100000.դրամ,
44.Պատճենահանման սարք	- 120000.դրամ,
45.Ջրի պոմպ	-49000 .դրամ
46Տոնական կախազարդ /2015թ/	-84.000 դրամ
47.Ցուցապաստառ/լուսի հովիտ 2015թ/	-50000 դրամ
48.Ցուցապաստառ/ պատմական նկարներ2016թ/	-36.000 դրամ
49.Բուրաստանի լոգոյով կավե սպասք2015թ/	-96300դրամ
50. Թվային սարք /2 հատ2016թ/	-24000 հազ. դրամ
51.Ձեռքի սրսկիչ/1 հատ2016թ/	8000 դրամ
52.Արտիզյանի նաստս /1 հատ2016թ/	-50000. դրամ
53. Տնօրենի աթոռ/1 հատ 2016թ/	130000. դրամ
54. Սպորտային գույք/2016թ/	15400 հազ. դրամ
/2 գնդակ, վոլեյբոլի ցանց/	

55.Շերտավանագույր/2016թ/10քմ./
 56. Ցուցանակ /2014թ/ 22հատ
 /համայնքի վաստակաշատ մանկավարժներ/
 57. Տոնածառ
 /տոնածառ, խաղալիքներ, փայլեր, լույսեր/
 58. Շախմատային գույք -

62700. դրամ
 -38000դրամ
 -140.000 դրամ
 100000. Դրամ

Ընդամենը

6274070 դրամ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

1. Աթոռ թատերական ` 68 հատ -1190000 դրամ,
 2. Գեղարվեստական նկարներ` 30հատ -988000 դրամ

Ընդամենը

2178.485հազ. դրամ

ԳՐԱԴԱՐԱՆ

1.Գրասեղան 1հատ -366 դրամ,
 2.Գրապահարան 2 հատ -639 դրամ,
 3.Կատալոգի արկղ 2 հատ - 473 դրամ,
 4.Երկաթյա պոլկաներ 21 հատ - 3715 դրամ,
 5.Գրադարակ 8 հատ -924 դրամ
 6. Գրականություն 8066 կտոր -139652 դրամ,

Ընդամենը

145769 դրամ

«Բուրաստանի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Մանկապարտեզի գույք /մանկ. սեղան և աթոռներ 2007թ./	կոմպլեկտ		534800
Կերամիկական մանկական լվացարան	հատ	4	48000
Կերամիկ. Մանկ. զուգարանակոնք	հատ	4	60000
Կերամիկ. լվացարան	հատ	1	15000
Կերամիկ. զուգարանակոնք	հատ	1	25000
Երկու տեղանոց խոհանոցակոնք	հատ	1	50000
Ծորակներ	հատ	6	24000
Պոլիէթիլեն ջրի բաք	հատ	1	100000
Կոյուղի			189550
Ջրապոմպ	հատ	1	80000
Երկկոնտուրանի կաթսա	հատ	1	354450
Այլումինե մարտկոցներ	սեկցիա	138	483000
Զեռուցում			341000
Սեղան	հատ	14	280000
աթոռ	հատ	50	210000
Խաղալիքի պահարան	հատ	4	136000
Հանդերձապահարան	հատ	6	240000

գրապահարան	հատ	2	52000
Ուսուցչի սեղան	հատ	2	66000
շերտավարագույր	քմ	25	112500
Արհեստական գորգ	քմ	120	234000
Արհեստական գորգ	քմ	30	97200
Գորգ	հատ	2	160000
Զրի սարք	Հատ	2	120000
Մանկական բազմոց	հատ	2	160000
Երաժշտական կենտրոն	հատ	1	120000
փոշեկուլ	Հատ	1	40000
Հեռուստացույց	հատ	2	120000
Հեռուստացույցի տակդիր	հատ	2	60000
DVD	հատ	2	60000
Մառնարան	հատ	1	170000
Դաշնամուր	հատ	1	100000
Գրատախտակի կոմպլեկտ	Հատ	2	50000
տեսախցիկ	հատ	1	130000
Սպասքի պահարան	հատ	1	40000
Ուսուցողական նյութեր /գրականություն, խաղալիքներ, գրենական պիտույքներ/			260000
Տնօրենի սեղան/2012թ/	կոմպլեկտ	1	120000
Գրասենյակային բազկաթոռ/2012թ/	հատ	1	30000
Պահարան /2012թ/	հատ	1	70000
Ժուռնալի սեղան /2012թ/	հատ	1	36000
Աթոռ սովորական/2012թ/	հատ	6	60000
Ընդամենը			5638500

ԲՈՒԺ. ԱՍԲՈՒԼԱՏՈՐԻԱ

1.Սեղան 4 հատ	-1124 դրամ,
2.Սեղան ապակով 5 հատ	-433.5 դրամ,
3.Ապարատ ÓÃ× -ի 1 հատ	-886 դրամ,
4.Ինգալատոր 1 հատ	- 92 դրամ,
5.Տելեժկա նասիլկա 1 հատ	- 509 դրամ,
6.Ապարատ գալվանիզացիոն 1 հատ	-231 դրամ,
7.Պահարան փայտյա 1 հատ	-580 դրամ,
8. Աթոռ կիսափափուկ 4 հատ	- 123.2 դրամ
9.Պահարան բժշկական 2 հատ	-716 դրամ,
10.Պահարան ընդհանուր նշանակության 3 հատ	-832 դրամ,
11.Բազկաթոռներ 5 հատ	-763 դրամ,
12.Մառնարան 1 հատ	-1247 դրամ,
13.Բարձ 4 հատ	-144 դրամ,
14.Գրասեղան 4 հատ	-955 դրամ,
15.Աթոռներ 6 հատ	-180 դրամ,
16. Նոր ստացված բուժ.սարք. և կահույք	5104317 դրամ,

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

1.Ուստանովկա 1հատ	-2687 դրամ,
2.Կրեսլո ատամնաբուժական 1հատ	- 862 դրամ,
3.Պահարան 1հատ	-123 դրամ,
4.Բիքս 1հատ	-16 դրամ,

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բուրաստանի համայնքապետարանը 2015թվականից ձեռնամուխ է եղել գլխավոր հատակագծի ձեռքբերմանը: Այն վերջին փուլում է և լիովին պատրաստ կլինի 2017թ. առաջին կիսամյակի ավարտին:

Քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթերից առկա է նաև համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

Համայնքը չունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ /կոյուղի /:

Առկա է կոյուղու մեկ գիծ, որը սկսվում է մոտավորապես Էլինա Մանասյան և Պ. Սևակի փողոցների հատման կետից և ձգվում Պ. Սևակի, Գ. Նժդեհի և Մ. Սարյան փողոցների որոշ հատվածներով՝ մինչև Անդրանիկի փողոցի ավարտը: Այն իր մեջ ընդգրկում է Բուրաստանի կոնյակի գործարանից՝ մինչև Անդրանիկի փողոց, տուն 35 տանող ճանապարհահատվածը:

Բուրաստան համայնքում կանոնավոր կերպով իրականացվում է աղբահանություն շաբաթը մեկ անգամ՝ յուրաքանչյուր կիրակի: Սակայն չկան աղբամաններ, որոնց բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ վիճակի վրա: Համայնքը չունի աղբատար մեքենա: Աղբահանությունն իրականացվում է անհատ անձի միջոցով, որի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր:

Բուրաստան համայնքում միայն կենտրոնական փողոցը՝ Արտաշատյան խճուղին է ապահովված արտաքին լուսավորությամբ:

Գյուղն ունի երկու գերեզմանատուն, որոնք ցանկապատված չեն:

2016թ. կատարվել է դեպի գերեզմանատուն տանող Պ. Սևակի փողոցի ասֆալտապատման նորոգում:

Համայնքը գազաֆիկացված է 95 %- ով:

Խմելու ջուր համայնքը ստանում է Գառնուց, սակայն ոչ շուրջօրյա:

Համայնքն ունի եկեղեցի, որ կրում է <<Սուրբ Հակոբ>>ի անունը: Այն մասնակի վերանորոգման, բարեկարգման և ցանկապատման կարիք ունի:

2014-2016թթ նշված եկեղեցում համայնքապետարանի ջանքերով իրականացվել են մի քանի եկեղեցական ծեսեր ու միջոցառումներ՝ նշվել է Սուրբ Զատիկի տոնը, կատարվել են ժամերգություններ: Սակայն <<Սուրբ Հակոբ>> եկեղեցու լիակատար գործարկումը կարելի է իրականացնել վերը նշված վերանորոգման և բարեկարգման աշխատանքները կատարելուց հետո միայն:

2013-2016թթ կատարված շինարարական, բարեկարգման աշխատանքներից հետո համայնքի կենտրոնական մասը ստացել է ավելի գեղեցիկ, բարեկարգ և ակնահաճո տեսք:

Կառուցվել է տրանսպորտային ժամանակակից երկու կանգառ:

Բարեկարգվել է մշակույթի տան հարակից տարածքը և կառուցվել է երկու այգի: Այգիներում տեղադրվել են նստարաններ: <<Լույսի հովիտ >> անունը կրող մանկական այգում տեղադրված են նաև կարուսելներ:

1.7 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի Իսահակյան փողոցում կան 1980-ական թվականներից կառուցված 6 բազմաբնակարան շենքեր՝ 12 բնակարաններով, 862 քմ ընդհանուր մակերեսով, որտեղ ապրում է 12 ընտանիք՝ 52 անձ : Փողոցն ամբողջությամբ գազաֆիկացված է, անցկացվել է խմելու ջրի նոր ջրագիծ:

Համայնքում առանձնատների թիվը կազմում է 462, որոնց բնակելի մակերեսը 54542 քմ է : Մեկ ընտանիք / բաղկացած 1 անձից / ապրում է ժամանակավոր տնակում :

Համայնքի առանձնատների մի մասը վերանորոգված է, գեղեցիկ և բարետես, սակայն շատ են նաև այն տները որոնք վերանորոգման կարիք ունեն :

Կան նաև շատ նորաստեղծ երեխասարդ ընտանիքներ, որոնք հնարավորություն չունեն իրենց տնամերձերում սեփական բնակելի տներ կառուցել, այդ պատճառով կամ ապրում են իրենց հայրական տան ընտանիքների հետ միասին, կամ գյուղից բացակայող ընտանիքներին պատկանող ոչ այնքան բարեկարգ, կոմունալ պայմաններից զուրկ բնակելի տներում :

Ընդհանուր թվով բնակարանի կարիքավոր մոտ 30 ընտանիք ունի տնամերձ՝ սակայն հնարավորություն չունի այն կառուցապատել :

1.8 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածներ՝ 726մարդ, այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական աշխատանքով զբաղվածներ՝ 175մարդ, գյուղատնտեսական աշխատանքներում զբաղվածներ՝ 521մարդ, 128 մարդ մեկնում է արտագնա աշխատանքի:Արտագնա աշխատանքի մեկնելը հիմնականում պայմանավորված է աշխատատեղերի բացակայությամբ, կամ աշխատանք լինելու պարագայում չափազանց ցածր վարձատրությամբ :

Համայնքի տարածքում գործում է 3 խառը խանութ, մեկ ավտոպահեստամասերի խանութ մեկ դեղատուն, մեկ կենցաղի օբյեկտ / վաքսավիրանոց/ ավտոտեխսպասարկման մեկ կետ :

Բնակիչների հիմնական եկամուտը ստացվում է սեփականաշնորհված և տնամերձ՝ երբեմն էլ, նաև վարձակալած հողամասերի մշակումից:

Համայնքում բավականին զարգացած է ջերմոցային տնտեսությունը : Բնակիչները հաշվի առնելով սեփականաշնորհված հողամասերի՝ հիմնականում ցածրարժեք լինելը, ռոտզման ջրի մատակարարման խնդիրները, ինչպես նաև այն, որ նշված հողերից ստացված եկամուտը ստացված բերքի ինքնարժեքին գրեթե համարժեք է, կամ շատ քիչ է գերազանցում դրան, հաշվի առնելով գյուղտեխնիկայի պակասը և եղածի թանկ լինելու հանգամանքը, նաև թունաքիմիկատների ու պարարտանյութերի թանկությունը, շատ հաճախ նաև դրանց ոչ այնքան որակով լինելը, գերադասում են իրենց տնամերձերում ստեղծել և զարգացնել ջերմոցային տնտեսություններ՝ մշակելով բանջարանոցային կուլտուրաներ կամ ծաղիկ ու բավարարվում են դրանով :

Իսկ սեփականաշնորհված ու վարձակալած հողամասերը շատերն օգտագործում են կամ անասնակեր / առվույտ, խոտ և այլն / ստանալու կամ իրենց անասունների համար որպես արոտավայր օգտագործելու համար :

1.9 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 973.7 հա, որից՝

1. Տնամերձ հողեր -84.5 հա
2. Սեփականաշնորհված հողեր-190.5 հա
3. Գերեզմանոց / 2 միավոր /-4.7 հա
4. Գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհներ- 25 կմ
5. Պահուստային հողեր -----
6. Մեկ հողանքաժնի չափը 0.2 հա, սահմանամերձ գոտում՝ 0.35 հա :

Բուրաստան համայնքի հողային ֆոնդի բաշխումը բերված է աղյուսակ 2-ում

Աղյուսակ 2

NN	Նպատակային Նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կողմ NN	Ընդամենը (2+3+4+8+12)	Սեփականության սուբյեկտ									
					ՀՀ բաղադրացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական			
							ընդամենը (5+6+7)	սղակաժողովրդական	տնտեսական օգտագործման տրված ժամկետով	օգտագործման և օգտակարության չորված	ընդամենը (9+10+11)	սղակաժողովրդական	տնտեսական օգտագործման տրված ժամկետով	օգտագործման և օգտակարության չորված
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1,1	1. Գյուղատնտեսական	վարելահող		334.606	176.689		55,517		54,828	0,689	102,400		5,150	97,250
1,2		բազմ տնկարկներ, ընդամենը		13,824	13,824									
1.2.1		այդ թվում՝ պտղատու այգի		8,214	8,214									
1.2.2		խաղողի այգի		5,610	5,610									
1.2.3		այլ բազմամյա												
1,3		խոտհարք		90,580							90,580			90580
1,4		արոտ												
1,5		այլ հողատեսքեր		313,415	16,160		195,559		24,270	171,289	101,750		80,000	21,750
1		Ընդամենը		752.425	206,618		251,077		79,098	171979	294,730		85,150	209,580
2,1	2. Բնակավայրերի	բնակելի կառուցապատման		84,541	84,458		0,084			0,084				
2.1.1		այդ թվում՝ տնամերձ հողեր		84,541	84,458		0,084			0,084				
2.1.2		այգեգործական (ամառ-ն)												
2,2		հասարակական կառուցապ.		1,650	0,850	0,020	0,780			0,780				
2,3		խաղող կառուցապատման												
2,4		ընդհանուր օգտագործման		16,160			16,160			16,160				
2,5		այլ հողեր		3,759			3,759			3,759				
2		Ընդամենը		106,110	85,308	0,020	20,782			20,782				
3,1	3. Գյուղատնտեսական, արտադր., բնակատեղի	արդյունաբերության												
3,2		գյուղատնտեսական, արտադր.		13,156	7,766	1,660	3,730			3,730				
3,3		պահեստարաններ												
3,4		ընդերք օգտագործման												
3		Ընդամենը		13,156	7,766	1,660	3,730			3,730				

4,1	տրանսպորտի, կապի, կոմունալ	Էներգետիկայի		0,020				0,020							
4,2		կապի													
4,3		տրանսպորտի		7,280						7,280			7,280		
4,4		կոմունալ ենթակառուցվածք		0,070			0,070		0,070						
4		Ընդամենը		7,370			0,090		0,090	7,280			7,280		
5,1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական													
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային պարկեր													
5,2		առողջարարական													
5,3		հանգստի		1,060		1,060		1,060							
5,4		պատմական և մշակութային		5,060		4,700		4,700	0,360			0,360			
5		Ընդամենը		63,120		5,760		5,760	0,360			0,360			
6		Կ նշանակող	Ընդամենը		11,180		0,030	0,030		11,150			11,150		
7,1	7. Անտառային	անտառ													
7,2		թփուտ													
7,3		վարելահող													
7,4		խոտհարք													
7,5		արոտ													
7,6		այլ հողեր													
7		Ընդամենը													
8,1	8. Ջրային	գետեր		47,600					47,600			47,600			
8,2		ջրամբարներ													
8,3		լճեր													
8,4		ջրանցքներ		6,770		6,680		6,680	0,090			0,090			
8,5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.		22,969		0,210		0,210	22,759	0,199		22,560			
8		Ընդամենը		77,339		6,890		6,890	70,449	0,199		70,250			
9,1	9. Պահուստային	աղուտներ													
9,2		ավազուտներ													
9,3		ճահիճներ													
9,4															
9,5		այլ անօգտագործելի հողեր													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ (1+2+3+4+5+6+7+8+9)				973,700	299,692	1,680	288,359	0,030	79,098	209,231	383,969	0,199	85,150	298,620	

1.10 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում զբաղվածության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է՝ անասնապահությունն ու հողագործությունը : Համայնքում անասնապահությամբ զբաղվում են 41 ընտանիք :

Համայնքի բնակչության մեծ մասը զբաղվում է հողագործությամբ. Մշակվում են բանջարեղեն, պտուղ, նաև ծաղիկ՝ իրենց տնամերձերում կառուցված ջերմատներում :

2016թ. Հունիսի 1-ի դրությամբ համայնքի ցանքատարածությունները կազմել են՝

- Ցորեն -18 հա
- Գարի -5 հա
- Եգիպտացորեն -3 հա
- Առվույտ -60 հա
- Բանյարեղեն -13 հա
- Բոստան -1 հա
- Կարտոֆիլ -2 հա
- Արևածաղիկ -2 հա

Ընդամենը՝ 124 հա :

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1	2	3
1.	Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, այդ թվում՝	354
	Կովեր	148
2.	Խոզերի գլխաքանակը	74
3.	Ոչխարների և այծերի գլխաքանակը	67
4.	Ավանակների և ջորիների գլխաքանակը	0
5.	Ձիերի գլխաքանակը	6
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	2603
7.	Նապաստակների և ճագարների գլխաքանակը	17
8.	Մեղվաբնակների քանակը	78

1.11. ԲՆՈՒԹՅԱՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ապահովման անհրաժեշտ գործոններից մեկն է: Այս տեսակետից համայնքի խնդիրներից առաջնայինը բնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքում մաքրության ապահովումն է :

Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքում աղբահանության կազմակերպումը իրականացվում է նախատեսված կարգով և գտնվում է բավարար հիմքերի վրա :

Սակայն երբեմն որոշ բնակիչներ շինարարական աղբը , կամ գոմաղբը լցնում են չնախատեսված վայրեր և ստեղծում հակասանիտարական վիճակ :

Անհրաժեշտ է ազգաբնակչության շրջանում շարունակել բացատրական աշխատանքները և հետևողական ու ամենօրյա հսկողություն սահմանել այդ հարցի նկատմամբ : Աղբահանության աշխատանքների օպերատիվ իրականացման համար ավելի արդյունավետ կլինի աղբահան մեքենա ձեռքբերելը :

1.12 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը կենտրոնին կապող միջհամայնքային ճանապարհները հիմնականում բարեկարգ են : Ասֆալտապատված է Երևան –Արտաշատ խճուղին հատող Էլինա Մանասյան փողոցի մեծ մասը :

Գյուղամիջյան շատ փողոցներ՝ Ե. Չարենցի, Պ. Սևակի, Զ. Գալստյան , Անդրանիկի, Մ. Սարյան՝ վերջին երկու տարիներին բարեկարգվել և խճապատվել են :

Կատարվել են Պ. Սևակ փողոցի դեպի գերեզմանատուն տանող հատվածի ասֆալտապատման նորոգման աշխատանքներ :

Նման աշխատանքների կարիք կա նաև Մ. Սարյան. Էլինա Մանասյան, փողոցների որոշ հատվածներում :

Համայնքի տարածքում տեղակայված են բոլոր անհրաժեշտ ճանապարհային երթևեկության նշանները , ինչպես նաև՝ մեկ արագաչափ :

Համայնքի տարածքով են անցնում՝ Երևան-Արտաշատ, Լանջազատ- Արտաշատ , Մասիս-Արտաշատ երթուղային ավտոբուսները :

Միջհամայնքային , ներհամայնքային և միջպետական ճանապարհները անցանելի են և գտնվում են բարվոք վիճակում:

2016թ. ամռանը Հյուսիս –Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Ծրագիր 1-ի շրջանակներում համայնքի տարածքում սկսվեց ազգաբնակչության համար կենսական նշանակություն ունեցող վերգետնյա ուղեանցի / կամուրջ/ շինարարությունը : Այն նախատեսված է ավարտել 2018թվականին :

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքը դպրոց չունի:

Համայնքի շուրջ 250 դպրոցահասակ երեխաներ հաճախում են հարևան Մասիս գյուղի միջնակարգ դպրոցը :

Գյուղը սեփական դպրոց կարող է ունենալ միայն պետության աջակցությամբ կամ այլ հովանավորի : Համայնքի հնարավորություններով սեփական դպրոցի կառուցումը բացառվում է :

Համայնքն ունի մանկապարտեզի շենք, բայց չունի մանկապարտեզ :

Մանկապարտեզի շենքը գյուղի բուժամբուլատորիայի շենքից առանձնացված մասն է, որը մասնակի վերանորոգումների ենթարկվելուց և համապատասխան կահավորում ստանալուց հետո 2011թվականից շահագործվել է որպես նախակրթարան՝ 4-6 տարեկան երեխաների համար :

Մինչդեռ Բուրաստան համայնքի համար նախակրթարանն առաջնային չէ , այնպես, ինչպես մանկապարտեզը , քանի որ այդ տարիքի երեխաները, ինչպես համայնքի մյուս դպրոցահասակ երեխաները, կարող են հաճախել հարևան Մասիս գյուղի միջնակարգ դպրոցի նախակրթարանը : Եվ 2440 բնակչություն ունեցող համայնքը վերջապես կունենա մանկապարտեզ իր երեխաների համար :

Գիտակցելով մանկապարտեզի հսկայական դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ կառավարության որդեգրած նոր սկզբունքներով այն է՝ ունեցած ֆինանսական միջոցները ծախսել միմիայն նպատակային՝ կրճատելով համեմատաբար ոչ կարևոր ծախսերը , տարբերակելով գլխավորը երկրորդականից՝ Բուրաստան համայնքի ավագանու կողմից 2016թ. նոյեմբերին << ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ՄԱՆԱԿՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ –ը

լիկվիդացնելու և տնտեսված ֆինանսական միջոցները համայնքի համար ավելի կենսական մանկապարտեզի խնդրի լուծմանը՝ նպատակաուղղելու մասին որոշում է ընդունվել :

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի գեղեցիկ, բարեկարգ, ժամանակակից բուժամբուլատորիա , որտեղ իր գործունեությունն է ծավալում <<ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԱԱՊԿ>>-ն : Այն բացի Բուրաստան համայնքի բնակչությունից սպասարկում է նաև հարևան Մասիս համայնքի բնակչությանը :

<<ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԱԱՊԿ>>-ն ապահովված է համապատասխան բուժանձնակազմով՝ 2 ընտանեկան բժիշկ, 5 ընտանեկան և մեկ դպրոցական, մեկ թերապևտ բուժքույրեր, մեկ լաբորանտ: Բուժամբուլատորիան հնարավորություն ունի հիվանդների համար հենց տեղում անցկացնել ընդհանուր լաբորատոր հետազոտություններ, էլեկտրոսրտագրություն և գլյուկոզայի քանակի որոշում արյան մեջ :

Համայնքում նոր մանկապարտեզի կառուցման պարագայում, մանկապարտեզի շենքը , որը փաստորեն կազմում է բուժամբուլատորիայի շենքի մի մասը նպատակային կլինի նորից միացնել վերջինիս: Այդ ժամանակ <<ԲՈՒՐԱՍՏԱՆԻ ԱԱՊԿ>>-ն իր գործունեության ծավալները կարող է ավելի ընդլայնել և բնակչության բուժսպասարկումն ավելի բարձր մակարդակով իրականացնել :

1.15 ՄՇԱԿՈՒՅԹ ՍՊՈՐՏ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի երկհարկանի, տիպային գեղեցիկ մշակույթի տուն , որտեղ տեղակայված է նաև համայնքապետարանը :

Շենքը հիմնականում վերանորոգված է : Սակայն դահլիճն ու մարզասրահը վերանորոգման խիստ կարիք ունեն:

Համայնքի մշակույթի տանը գործում է գրադարանը , որն ունի 8066 կտոր գիրք : Անցած տարի գրադարանում կատարվել են վերանորոգման աշխատանքներ՝ վերանորոգվել են գրադարանները, կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ : Ստեղծվել են ավելի բարեկեցիկ պայմաններ ընթերցողների սպասարկումն ավելի բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Վերջին 2-3 տարիների ընթացքում համայնքում առանձնակի ուշադրություն է հատկացվում մշակութային ու սպորտային միջոցառումներին : Այս տեսակետից համայնքում մեծ առաջընթաց կա :

Բնակիչների և համայնքապետարանի՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնի՝ կապը մեծապես ավելի է սերտանում նաև նման միջոցառումների շնորհիվ :

Համայնքում ավանդույթ է դարձել Նոր տարվան, Տյարն ընդառաջին, Սուրբ Զատիկի տոնին, երեխաների պաշտպանության օրվան, Տարեցների օրվան նվիրված և բազմաթիվ այլ միջոցառումներ , որոնց ազգաբնակչությունը մեծ սիրով է մասնակցում :

Երեխաների ամառային հանգիստն ավելի նպատակային ու բովանդակալից կազմակերպելու, նրանց մեջ հայրենասիրության դաստիարակության, գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն աջակցելու նպատակով՝ 2014թվականից համայնքի մշակույթի տան բակում ամռանը / հուլիս-օգոստոս / ամիսներին համայնքի ղեկավարի անմիջական նախաձեռնությամբ իր գործունեությունն է ծավալում << Բուրաստան >> բակային ճամբարը :

Մշակույթի տան դահլիճում անցկացվում են նաև սպորտային տարբեր մրցումներ / բոցքամարտ, արևելյան մարզաձևեր /:

1.16 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում են առևտրի 3 օբյեկտ / խառը խանութներ / , որոնք զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի արտադրանքի , ակոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով : Համայնքում գործում է մեկ կենցաղի օբյեկտ /վարսավիրանոց/ , մեկ դեղատուն, մեկ ավտոտեխսպասարկման կետ: Դրանք բոլորն էլ հաշվառված են տարածքային հարկային տեսչությունում և կատարում են իրենց հարկային պարտավորությունները :

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- * Համայնքն ունի ավելի քան - 150 բարձրագույն կրթությամբ բնակիչ, դա տարբեր բնագավառների հետ կապված աշխատանքների համար կարող է առաջընթաց ապահովել :
- *Համայնքում մեծ աշխատուժի առկայությունը
- *Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային զգալի ռեսուրսների առկայությունը
- *Համայնքում հեռախոսակապի , հեռուստատեսության և ինտերնետ կապի առկայությունը
- *Արտաշատյան խճուղու արտաքին լուսավորությունը
- *Համայնքում զազամատակարարման առկայությունը
- *Համայնքի մոտ լինելը քաղաքային շուկաներին և Երևան քաղաքին առհասարակ

1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- *Համայնքում ռոռզման ջրերի ցանցերի անմխիթար վիճակը
- *Համայնքում մանկապարտեզի բացակայությունը
- Համայնքային հողերի մեծ մասի ցածրարժեք լինելու փաստը
- Ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) բացակայությունը
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մաշտաբը և ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը
- Համայնքում աշխատատեղերի պակասը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը
- Համայնքում տարեցտարի արտագնա աշխատանքի մեկնողների թվի ավելացումը՝ իր բոլոր բացասական հետևանքներով
- *ռոռզման ցանցի կիսախոդովակների տեղադրումը

1.18 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Ուղղակի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն

1.19 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքում ոռոգումը իրականացվում է մեխանիկական եղանակով, պոմպերի միջոցով, պոմպերի խափանման և հոսանք չլինելու դեպքում համայնքը կգրկվի ոռոգումից: Չկան խողովակներ և կիսախողովակներ ոռոգման ցանցերի վերանորոգման համար:
 - *Համայնքում որոշ սեփականատերերի կողմից հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը
 - Աղբամանների բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
 - Համայնքում գյուղտեխնիկայի պակասը երբեմն էլ բացակայությունը
 - Գյուղացիների կողմից աճեցված գյուղմթերքների բարձր ինքնարժեքի պատճառով գյուղատնտեսությունից ստացված եկամուտների նվազումը, որն ի վերջո սպառնում է գյուղատնտեսության զարգացմանը:
 - Համայնքի երիտասարդների արտագնա աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:
 - * Մեկավներ և հեղեղներ. Համայնքի վարչական տարածքով անցնող Հրազդան և Ագատ գետերը մշտապես պահպանում են այս վտանգը:
- Անցյալ տարիներին դա եղել է մի քանի անգամ, որի հետևանքով ջուրը քշել տարել է մշակվող հողատարածքներ և ճանապարհներ, որոշ սեփականատերեր նույնիսկ գրկվել են իրենց սեփականաշնորհված հողումասերի որոշակի մասերից, կամ ջրի մակարդակը բարձրանալով՝ ծածկել է շրջակա ցանքատարածությունները և մեծ վնաս է հասցրել հողօգտագործողներին:
- *Համայնքի հողերի զգալի մասը գտնվում է սահմանամերձ գոտում և հարում է Թուրքիայի հետ պետական սահմանին:

1.20 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքում վերջին տարիների ընթացքում նկատելի է որոշակի դրական տեղաշարժ ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային հանդիպումներին ու միջոցառումներին: Համայնքներում կազմակերպվում են հանրային լսումներ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և

վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, տեղադրվում են համայնքի պաշտոնական կայքում՝ burastan.am –ում, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը, ինչպես նաև ՏՏ ոլորտում տեղի ունեցող զարգացումները հնարավորություն են տալիս առավել ժամանակակից միջոցներով կապ պահպանել բնակչության հետ՝ պաշտոնական կայքի հետ զուգահեռ համայնքի մշակութային կյանքին և սպասվելիք իրադարձություններին: Համայնքի բնակիչները հնարավորություն ունեն ծանոթանալ նաև <<Բուրաստան համայնք >> ֆեյսբուքյան էջի միջոցով: Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.21 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Համայնքը ունի բնակչության տարահանման հանձնաժողովը, բնակչության տարահանման գործողությունների պլանը ընթացքի մեջ է: Համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, համայնքին սպառնացող աղետների ռիսկի կանխման համար:

Անհրաժեշտ է ձեռնարկել սելավատարների և գաբիոնների կառուցումը: Սա առանց պետական աջակցության ու ֆինանսավորման՝ միայն համայնքի ուժերով անհնար է:

1.22 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող մի քանի արտադրական ՍՊԸ-ներով, ԱԶ-ներով, առևտրի մանր կետերով, որոնց հետ համայնքապետարանը պահպանում է լավ ու բարյացկամ հարաբերություններ:

Անցյալ տարում համայնքում իր գործունեությունը սկսեց նաև <<Վյատկա>> ՍՊԸ-ն, որը զբաղվում է հացի արտադրությամբ: Համայնքի բնակչության համար ՍՊԸ-ն ապահովեց ևս 10 աշխատատեղ: Սակայն, դրանով հանդերձ, միևնույն է, համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Խելամտորեն օգտագործել համայնքի ֆինանսական միջոցները,

- Խթանել Բաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներից որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել Տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր
- Աստիճանաբար ընդլայնել համայնքի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալները և արդյունավետությունը, և, որպես հետևանք, բնակչությանը դրանց հասանելիության և որակի մակարդակները
- Համայնքի տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնական պաշարների և այլ արժեքների առկայությունից
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը և, արդյունքում, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը
- Բարձրացնել համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով
- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը: Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Բուրաստան համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, ծաղկաբուծության, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

- չխորացնել համայնքի զարգացմանը խոչընդոտող խնդիրները և ապահովել համայնքի աստիճանական ինտեգրումն ու համաչափ զարգացումը,
- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում և անասնագլխաքանակի ավելացում՝ ռոռզման ջրի մատակարարման և հողատարածքներն ավելի ռացիոնալ օգտագործելու միջոցներով,
- համայնքում կաթի, մսի, բանջարեղենի հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծում և գործարկում՝ գործարար մարդկանց հետ կապի ու նրանց հնարավոր մեթոդներով խրախուսելու միջոցով,
- համայնքի տարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում,
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, մանկապարտեզի խնդրի լուծում մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
- համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինների, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,

- համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,
- նոր աշխատատեղերի ստեղծում

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021ԹԹ. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների (մանկապարտեզի, մշակույթի տան , դահլիճի և մարզասրահի) հիմնանորոգում ,
- համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու (օրինակ, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գծով արտոնություններ տրամադրելու) միջոցով:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱ-ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի Տեղական ինքնակառավարման մարմինները նախատեսում են լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2016-2020թթ.-ին նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի)

գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:

- Մշակույթի տան դահլիճի և մրգասրահի հիմնադրոգում և կահավորում :
- Համայնքի <<Սուրբ Հակոբ >> եկեղեցու հիմնադրոգում և տարածքի բարեկարգում :
- Համայնքում ջրամատակարարման համակարգերի հիմնադրոգում կամ մասնակի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում՝ համագործակցության ներգրավելու կազմակերպությունը::
- Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-2021թթ. ընթացքում Հայաստանում ընթացող վարչատարածքային բարեփոխումների և (կամ) միջհամայնքային համագործակցության շրջանակներում նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- ՀՏԶ-ի հետ՝ «Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և սպասարկման, աղբահանության ծառայությունների ստեղծում, դպրոցականների ու երիտասարդության շրջանում բնապահպանական և ագրոբիզնեսի կառավարման գիտելիքների տարածում» ծրագիրը:
- Հնարավոր այլ ծրագրեր ու միջոցառումներ:

2017-21թթ. ընթացքում կշարունակվեն համայնքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների համագործակցության շրջանակներում նախատեսվող ներդրումային, դրամաշնորհային, տեխնիկական աջակցության, բարեգործական ծրագրերը և միջոցառումները:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆխԱՐԳԵԼՈՒՄ

Կատարելով համայնքի 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել

1) Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել 2014-15թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ: Մուտքերի աճը նախատեսվել է՝ հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, որպես 2017թ. ցուցանիշ հիմք է ընդունվել նախկին տարիների ելակետային տվյալները:

**Աղյուսակ 3. Համայնքի 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ**

	Մուտքերի անվանումը	2017թ. նախատ.	2018թ. փաստ.	2019թ. նախատ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	54354.277	57974800	57974800	57974800	57974800
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ (1+2+3)	42974.8	42974800	42974800	42974800	42974800
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7678.0	7678.0	7678.0	7678.0	7678.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	3444.0	3444.0	3444.0	3444.0	3444.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	194.0	194.0	194.0	194.0	194.0
	Հողի հարկ	3250	3250	3250	3250	3250
1.2	Գույքային հարկեր այլ գույքից					
	Գույքահարկ փոխադրամիջոցներ ի համար	3892.0	3892.0	3892.0	3892.0	3892.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ					
	Տեղական տուրքեր	280.0	280.0	280.0	280.0	280.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ					
	Պետական տուրքեր					
1.5	Այլ հարկային եկամուտներ					
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ					
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում					

	բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ					
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՍՄԱՇՆՈՐՀՆԵՐ	34336.0	11227,0	34336.0	11227,0	34336.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	34336.0	34336.0	34336.0	34336.0	34336.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)					
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)					

բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	960.0	960.0	960.0	960.0	960.0
3.1	Տոկոսներ					
3.2	Շահաբաժիններ					
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	800.0	800.0	800.0	800.0	800.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	800.0	800.0	8000.0	800.0	800.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ					
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ					
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր					
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում					
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի					

	Ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ					
3.5	Վարչական գանձումներ					
	Տեղական վճարներ	150.0	150.0	150.0	150.0	150.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ					
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ					
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	10.0	10.0	10.0	10.0	10.0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ					
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից					
7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3.9	Այլ եկամուտներ*					
	Համայնքի գույքին պատճառած					

	վնասների փոխհատուցումից մուտքեր					
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր					
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ					
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)					
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր					
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր					
	Շարժական գույքի իրացումից մուտքեր					
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր					
2.	Պաշարների իրացումից մուտքեր					
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր					
4.	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր					
	Հողի իրացումից մուտքեր	0.0				
	Ոչ նյութական զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր					
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵ ՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)					

Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)					
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր					
	-հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	-վարկերի ստացում					
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					
	-բյուջետային փոխատվություններ ի ստացում					
	-ստացված փոխատվություններ ի գումարի մարում					
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն					
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր					
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր					
	-բաժնետոմսեր և					

	կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում					
2.2	Փոխատվություններ					
	-նախկինում տրամադրված փոխատվություններ ի դիմաց ստացվող մարումներից մուտքեր					
	- փոխատվություններ ի տրամադրում					
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	11379.477	1500000	1500000	1500000	15000000
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս					
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս					
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում					
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը					
	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐ					
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					
	-թողարկումից և տեղաբաշխումից					

	մուտքեր					
	-հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	-վարկերի ստացում					
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					
	- փոխատվությունների ստացում					
	-ստացված փոխատվությունների գումարի մարում					

Համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր՝ հիմնականում համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից համայնքի ֆոնդային բյուջե հատկացումների հաշվին, ինչպես նաև հողերի իրացումից մուտքերի հաշվին:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատողների (14հաստիքային միավոր) 2017 թվականի միայն աշխատավարձի տարեկան ֆոնդը նախատեսվել է 18500,0 հազ. դրամ իսկ աշխատակազմի պահպանման մյուս ընդհանուր ծախսերը՝ 3465,0հազ. դրամ: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ՝

2017-2021թթ. ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է համայնքի ղեկավարի, աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և պահպանման այլ ծախսերի բարձրացում :

Հաշվի առնելով վերոնշյալը՝ համայնքի 2017-21թթ. տարեկան բյուջեներից (տե՛ս աղյուսակ 3) հնարավորություն կլինի կատարելու մոտ 75 մլն դրամի ծախսեր կապիտալ աշխատանքներ կատարելու համար, եթե, իհարկե, պայմանականորեն ընդունենք, որ տվյալ տարվա վարչական բյուջեում, բացի համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերից, գործառական դասակարգման այլ ուղղություններով ընթացիկ ծախսեր չեն նախատեսվելու և չեն իրականացվելու: Իսկ եթե տվյալ տարվա վարչական բյուջեում նախատեսվեն և իրականացվեն այլ ընթացիկ ծախսեր ևս, ապա, բնականաբար, ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի և ծրագրերի համար նախատեսվող միջոցները կպակասեն համապատասխան չափով:

Այսպիսով, համայնքի տվյալ տարվա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարը համայնքի այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսեր կատարելու համար:

5.ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ

ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայում արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից, առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 4)՝ ներառելու համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում:

Աղյուսակ 4. Համայնքի 2017-21թթ. ՀԶՀԾ-ում ներառելու համար առաջարկվող ծրագրերի ցանկը

/հ	Ծրագրի անվանումը	Ծրագիրն առաջարկողը	Ծրագրի մոտավոր արժեքը, ֆինանսավորման աղբյուրը, հազ. դրամ
1	Համայնքի գլխավոր հատակագիծ	Համայնքի ղեկավար	3500.0
2	Մարզահրապարակի հիմնում	Համայնքի ավագանի	1000.0
3	Ոռոգման ցանցերի կիսախողովակների տեղադրում	Համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի	10000,000
4	Նոր խմելու ջրագծերի անցկացում	Համայնքապետ	5000.0
5	Գաբիոնների կառուցում	Համայնքապետ	15000.0
6	Մշակույթի տան դահլիճի և մարզասրահի հիմնում և կահավորում	Համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի	25000.0
7	Ասֆալտի փոսային նորոգումներ	Համայնքի ավագանի	10000.0
8	Փողոցների կոպչապատում	Համայնքի ղեկավար	4000.00
9	Համայնքի գերեզմանատան ցանկապատի կառուցում և հանգստի քարերի տեղադրում	Համայնքի ղեկավար	4500.0
10	Փողոցների արտաքին լուսավորվածության անցկացում	Համայնքի ղեկավար	6000.0
11	Մանկապարտեզի կառուցում	Համայնքի ղեկավար	140000.0
12.	Եկեղեցում հիմնանորոգում և ցանկապատում	Համայնքի ղեկավար	15000.0
		Համայնքի ղեկավար	

Առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու նպատակով, ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից սահմանվել են ծրագրերի գնահատման հետևյալ չափանիշները՝

- հանրության աջակցությունը,
- ուղղակի և անուղղակի շահառուների թիվ,
- հարատևություն (կենսունակություն),
- ազդեցություն սոցիալական խոցելի խմբերի վրա, աղքատության նվազեցում,
- հիմնական միջոցների (ենթակառուցվածքների) պահպանում:

Կիրառելով ծրագրերի առաջնահերթությունների որոշման մասնակցային կառավարման մեթոդը և օգտագործելով ծրագրերի գնահատման սահմանված չափանիշները՝ ՀԶԲԾ-ի և

տարեկան բյուջեի կառավարման գծով Խորհրդակցական մարմինն իր նիստում քննարկել և որոշել է վերևում առաջարկված համայնքային ոլորտային ծրագրերի առաջնահերթությունները:

Ինչպես երևում է ՀԶՀԾ-ի 4-րդ բաժնի աղյուսակ 3-ից, համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը հնգամյա հատվածում կազմելու են 215 մլն դրամ: Դա նշանակում է, որ համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ ՀԶՀԾ-ում հնարավոր է ներառել ծրագրեր միայն նշված գումարի սահմաններում: Համայնքի մանկապարտեզի, մշակույթի տան, ճանապարհի կապիտալ նորոգման ծախսերի համար նախատեսվում է դիմել ՀՀ Կառավարությանը կամ դոնոր կազմակերպություններին:

Աղյուսակ 6. Համայնքի 2017-2021թթ. ֆինանսապես ապահովված ընդհանուր և ոլորտային ծրագրերի ամփոփագիր

/հ	Ծրագրի անվանումը	Չափի միավորը	Ծրագրի քանակական ծավալը	Ծրագրի արժեքը, հազ. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների						Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները		
						2017	2018	2019	2020	2021	Համայնքի բյուջե	Դոնոր կազմ.-եր	Պետբյուջե
1.	Համայնքի գլխավոր հատակագիծ	Հատ	1	1000.0		1000.0					1000.0		
2	Մարզահրապարակի կառուցում			1000.0		1000.0					1000.0		
3	Ռոտզման ցանցերի կիսախողովակների տեղադրում	կմ		10000.0			2000.0	2000.0		6000.0	7000.0		3000.0
4	Նոր Խմելու ջրագծերի անցկացում	կմ		5000.0			2500.0	1000.0	1500.0			5000.0	
5	Մշակույթի տան դահլիճի և մարզասրահի հիմնում և կահավորում			25000.0			15000.0	8000.0		2000.0	10.000.0	10000.0	5000.0
6	Գաբյոնների կառուցում	քմ		15000.0				10000.0	5000.0			5000.0	10000.0
7	Ասֆալտի փոսային նորոգումներ			10000.0			3500.0	3500.0	3000.0		10000.0		
8	Փողոցների կոպճապատում			4000.0		1500.0		1500.0		1000.0	4000.0		
9	Համայնքի գերեզմանատան ցանկապատի կառուցում և հանգստի քարերի տեղադրում	Քմ		4500.0		1900.0	2600.0				4500.0		
10	Մանկապարտեզի կառուցում			140000.0		5000.0	25000.0	35000.0	35000.0	40000.0	10000.0		130000.0
11	Եկեղեցում հիմնանորոգում և ցանկապատում			15000.0		3000.0	5000.0	2000.0	5000.0		10000.0	5000.0	
12	Փողոցների արտաքին լուսավորվածության անցկացում			6000.0		1500.0			2000.0	2500.0	6000.0		
	Ընդամենը			236500.0		14900.0	55600.0	63000.0	51500.0	51500.0	63500.0	25000.0	148000.0

**Աղյուսակ 7. Համայնքի 2017-2021 թ.թ. բյուջեների մուտքերի և դրանց հաշվին կատարվող
ընդհանուր ու ոլորտային ծրագրերի ծախսերի ցուցանիշների համեմատությունը և
վերլուծությունը**

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	2017	2018	2019	2020	2021
1.	Համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը*, այդ թվում՝	54354.3	57974.0	57974.0	57974.0	57974.0
1.1	Վարչական բյուջեի ընդհանուր մուտքերը	54354.3	57974.0	57974.0	57974.0	57974.00
1.2	Ֆոնդային բյուջեի ընդհանուր մուտքերը, այդ թվում՝	0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը	0	0	0	0	0
2.	Համայնքի ընդհանուր և ոլորտային ծրագրերի ծախսերը, այդ թվում՝	48109.2	50974.0	50774.0	50774.0	50474.0
2.1	Ընթացիկ ծախսեր	48109.2	50974.0	50774.0	50774.0	50474.0
2.2	Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
3.	Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ, այդ թվում՝	6244.8	7000.0	7200	7200.0	7500.0
3.1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	6244.8	7000.0	7200.0	7200.0	7500.0
3.2	Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ	0	0	0	0	0

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր մուտքերի մեջ

**Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական
ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման)
մասին դրույթներ**

Համայնքի գլխավոր հատակագիծը, որն ընդունված է համարել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից կարևորագույնը պատրաստ կլինի ընթացիկ տարվա երկրորդ կեսին : Առկա է նաև համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը :

Գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ և քաղաքաշինական կադաստրի ձեռք բերելու համար , քանի որ դրանց պատվիրատուն համայնքն է . նախատեսվում է համագործակցություն ծավալել ՀՀ-ում գործող նախագծային ինստիտուտների հետ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախահաշիվները , համայնքի բյուջեում նախատեսելու համար :

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՌԻԴԴԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

Աղյուսակ 7. Համայնքի 2017-2021 թ.թ. բյուջեների մուտքերի և դրանց հաշվին կատարվող ընդհանուր ու ոլորտային ծրագրերի ծախսերի ցուցանիշների համեմատությունը և վերլուծությունը

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	2017	2018	2019	2020	2021
1.	Համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերը*, այդ թվում՝	54354.3	57974.0	57974.0	57974.0	57974.0
1.1	Վարչական բյուջեի ընդհանուր մուտքերը	54354.3	57974.0	57974.0	57974.0	57974.00
1.2	Ֆոնդային բյուջեի ընդհանուր մուտքերը, այդ թվում՝	0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը	0	0	0	0	0
2.	Համայնքի ընդհանուր և ոլորտային ծրագրերի ծախսերը, այդ թվում՝	48109.2	50974.0	50774.0	50774.0	50474.0
2.1	Ընթացիկ ծախսեր	48109.2	50974.0	50774.0	50774.0	50474.0
2.2	Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր					
3.	Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդ, այդ թվում՝	6244.8	7000.0	7200	7200.0	7500.0
3.1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	6244.8	7000.0	7200.0	7200.0	7500.0
3.2	Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ	0	0	0	0	0

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր մուտքերի մեջ

Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ

Համայնքի գլխավոր հատակագիծը, որն ընդունված է համարել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերից կարևորագույնը պատրաստ կլինի ընթացիկ տարվա երկրորդ կեսին : Առկա է նաև համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը :

Գոտիավորման նախագիծ, ընթացիկ քաղաքաշինական քարտեզ և քաղաքաշինական կադաստրի ձեռք բերելու համր , քանի որ դրանց պատվիրատուն համայնքն է . նախատեսվում է համագործակցություն ծավալել ՀՀ-ում գործող նախագծային ինստիտուտների հետ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների նախահաշիվները , համայնքի բյուջեում նախատեսելու համար :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ կենցաղային աղբը չթափելու դրա համար չնախատեսված վայրերում, գերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից ու վնասումից,
- յուրաքանչյուր տարի գարնանը համայնքում կազմակերպել «Մաքուր համայնք» կարգախոսով 2-3 շաբաթօրյակներ՝ իրականացնելու բնության և շրջակա միջավայրի մաքրության, ծառատնկման աշխատանքներ, դրանց ներգրավելով նաև երիտասարդներին և դպրոցականներին:

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Չնայած ՀՀ գործող օրենսդրությամբ ՏԻՄ-երն այս ոլորտում առայժմ պարտադիր լիազորություններ գրեթե չունեն, այնուամենայնիվ հաշվի առնելով, որ 2016 թվականի հուլիսի 29-ին ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել ՀՀ 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունում ամրագրված մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ համայնքի ՏԻՄ-երը շահագրգռված են համայնքում գործարար միջավայրի բարելավմամբ և պատրաստակամ են ըստ ամենայնի օժանդակել այս ոլորտում ցանկացած նոր նախաձեռնության, քանի որ այն մեծապես կնպաստի համայնքում նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը և վճարունակության բարձրացմանը, համայնքի բյուջետային սեփական միջոցների հավաքագրման մակարդակի բարձրացմանը և ծավալի մեծացմանը, և, այս ամենի արդյունքում՝ համայնքի ընդհանուր զարգացմանը:

Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ըստ ամենայնի աջակցել համայնքում գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու արտադրության ծավալները և ավելացնելու աշխատատեղերի քանակը,
- աջակցել համայնքում նոր արտադրություններ և աշխատատեղեր ստեղծելու նախաձեռնությունն ցուցաբերող գործարարներին՝ տրամադրելով նրանց գործունեություն իրականացնելու համար համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալման, տեղական տուրքերի և վճարների գծով արտոնություններ,
- համայնքում խթանել գյուղատնտեսության, անասնապահական և թռչնապահական մթերքների (մասնավորապես՝ գյուղմթերքի, կաթի, մսի, ձվի) արտադրության, հանձնման և վերամշակման արտադրամասերի ստեղծումը, գործարկումը և զարգացումը,
- համայնքում խթանել առևտրի և ծառայությունների փոքր ու միջին նոր կետերի բացումը, բնակչությանը և հյուրերին պատշաճ մակարդակով սպասարկումը՝ պաշտպանելով դրանց սեփականատերերի իրավունքները և շահերը,
- աստիճանաբար նորոգել և բարեկարգել միջհամայնքային ճանապարհները և փողոցները, անցկացնել արտաքին լուսավորության համակարգեր՝ նպաստելու համայնքում գործարար միջավայրի բարելավմանը և բիզնեսի զարգացմանը,
- Էլինա Մանասյան փողոցում լուսավորության անցկացում
- Գ. Նժդեհի, Մ. Սարյան, փողոցների բարեկարգման կարիք ունեցող հատվածների բարեկարգում և խճապատում
- Ոռոգման ջրի ցանցի վերանորոգում և կիսախողովակների տեղադրում
- Երկաթգծի կողմից գյուղ մտնող նոր խմելու ջրագծի անցկացում

- Մանկական այգու համար ժամանակակից կահավորանքի / սղարաններ, խաղարան / ձեռքբերում :
- Գերեզմանատան համար երկու հանգստի քարերի ձեռքբերում
- Մշակույթի տան հարակից տարածքում սպորտհրապարակի կառուցում և կահավորում :

Աղետների ռիսկի կառավարման հիմնական մոտեցումներ

Համայնքում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի աղետների ռիսկերի կառավարման հարցերում շարունակել համագործակցությունը հանրապետական համապատասխան մարմինների հետ՝ մասնավորապես ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ,
- ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների հայտ, որի արդյունքում պետք է կազմվի համայնքի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը,
- համայնքի բնակչության իմացության, հմտությունների, գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և համայնքում առկա ռեսուրսների բացահայտում, որոնք հնարավոր է ուղղել աղետների ռիսկի նվազեցմանը նպաստող համայնքահեն միջոցառումների պլանավորմանն ու իրականացմանը,
- համայնքի խոցելիության և կարողությունների գնահատում, ներառյալ այդ գործընթացի կազմակերպման և իրականացման խմբի ձևավորումը, նախապատրաստական աշխատանքները, տվյալների հավաքագրումը և հետազոտումը՝ համապատասխան գործիքների և մեթոդների ընտրությամբ, վերլուծական աշխատանքների իրագործումը՝ յուրաքանչյուր փուլում ձեռնարկվող քայլերի և ակնկալվող արդյունքների ամրագրմամբ և ձևակերպմամբ,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման գործողությունների և միջոցառումների պլանի կազմում և իրականացում,
- բերքի պահպանման նպատակով համայնքի վերին հատվածում ևս 1 հակակարկտային կայան տեղադրելու համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում՝ ֆինանսավորման արտաքին աղբյուրներից (պետություն, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ) անհրաժեշտ միջոցների հայթայթում,
- համայնքում աղետների ռիսկի կառավարման կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:
- Սելավատարների և գաբիոնների կառուցում դոնոր կազմակերպությունների , կամ պետության աջակցությամբ :

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ

Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ 2017-2021թ.թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները և միջոցառումները՝

- համայնքի սեփականություն համարվող կոմունալ ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, ըստ հնարավորությունների՝ նորոգում և զարգացում,
- համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքի կազմակերպում,
- վերահսկողություն համայնքի բնակչությանը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների (գազամատակարարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, բնակավայրի բարեկարգում և կանաչապատում և դրանց պահպանում և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման նկատմամբ,

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությանն ուղղված միջոցառումներ

Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ոլորտում ավելի ակտիվացնելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- համայնքի բնակչության իրազեկվածության բարձրացում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտի օրենսդրության և համայնքի ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ,
- համայնքի կարիքների և հիմնախնդիրների պարբերական քննարկում, վերլուծում և գնահատում՝ ֆոկլուս-խումբ քննարկումների, համայնքային հանդիպումների, ժողովների և բնակիչների հետ անմիջական շփումների և երկխոսությունների միջոցով,
- բնակիչների ներգրավում համայնքի բյուջեի և զարգացման ծրագրերի մասնակցային պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացներում,
- համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն և համախմբում՝ համայնքի որոշակի խնդիրների լուծման, հանրային ծառայությունների մատուցման շուրջ,
- համայնքի ՏԻՄ-ի (ղեկավար, ավագանի), աշխատակազմի, ակտիվ բնակիչների շարունակական կրթում և վերապատրաստում՝ տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառում:

7. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Այսպիսով, համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման աշխատանքները կազմակերպելիս: Անցյալ տարիների փորձը ցույց է տվել, որ տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է բյուջետավարման գործընթացի ճիշտ կազմակերպումից:

Շատ կարևոր է եկամուտների աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը:

Ելնելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից, համայնքապետարանի աշխատակազմը մշակում է կոնկրետ ծրագրեր, որոնցով կարելի է հարց ներկայացնել հանրապետական բյուջեից ներդրումներ ստանալու համար, փնտրել ինվենստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել բնակիչների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների միջոցները: